



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
28 օգոստոսի 2019 թվականի N 229 -Ա

«ԿԱՊԱՆԻ ԱԼ. ՇԻՐՎԱՆՋԱԴԵԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ մ եմ.

1. Տիգրան Աթայանին 2019թ. օգոստոսի 29-ից նշանակել «Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2. Արթուր Գաբրիելյանին 2019թ. օգոստոսի 29-ից ազատել «Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:

3. Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Արփիկե Դավթյան

Մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)

Մարինե Աբգարյան

մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ


Անուշ Սիմոնյան

մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել ետոյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

8/29/2019

X 

VERIFIED OCSP 8/29/2019 10:51:55 GMT+4

Подписано: 2019.08.29 10:51:55 +0400, ID: 05640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Կապան

